



Մամուլի ծանուցագիր

Հայաստանում մարդու իրավունքների իրավիճակը կուսումնասիրվի Համընդհանուր պարբերական դիտարկման շրջանակում

ԺՆՇՎ (հունվարի 20, 2020 թ.) – Հինգշաբթի՝ 2020 թ. հունվարի 23-ին, Հայաստանում մարդու իրավունքների իրավիճակը երրորդ անգամ կքննվի ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի՝ Համընդհանուր պարբերական դիտարկման (ՀՊԴ) աշխատանքային խմբի կողմից՝ համացանցով ուղիղ [հեռարձակվող նիստում](#)։

Հայաստանը մեկն է 14 պետություններից, որոնք կդիտարկվեն ՀՊԴ աշխատանքային խմբի կողմից հունվարի 20-ից 31-ը կայանալիք նստաշրջանի ընթացքում։ Հայաստանի առաջին և երկրորդ դիտարկումը ՀՊԴ-ի աշխատանքային խմբի կողմից տեղի է ունեցել համապատասխանաբար 2010 թ. մայիսին և 2015 թ. հունվարին։

Դիտարկումը տեղի է ունենում հետևյալ փաստաթղթերի հիման վրա. 1) ազգային զեկույց՝ քննման ենթակա պետության կողմից ներկայացված տեղեկատվություն, 2) մարդու իրավունքների ոլորտի անկախ փորձագետների և խմբերի, մարդու իրավունքների պայմանագրային մարմինների և ՄԱԿ-ի այլ մարմինների զեկույցներում ներառված տեղեկատվություն, 3) այլ շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ մարդու իրավունքների ազգային հաստատությունների, տարածաշրջանային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության խմբերի կողմից տրամադրված տեղեկատվություն։

Հունվարի 23-ի Հայաստանի դիտարկման համար հիմք ծառայող երեք զեկույցներին կարելի է ծանոթանալ [այստեղ](#)։

Վայրը՝ սենյակ 20, Ազգերի պալատ, Ժնև

Ժամ և ամսաթիվ՝ 14:30 – 18:00, հինգշաբթի, հունվարի 23 (Ժնևի ժամանակով (Գրինվիչի միջին ժամանակ +1 ժամ))

ՀՊԴ-ն եզակի գործընթաց է, որի շրջանակում ՄԱԿ-ի բոլոր 193 անդամ-պետություններում իրականացվում է մարդու իրավունքների իրավիճակի պարբերական դիտարկում։ 2008 թ. ապրիլին կայացած դիտարկման առաջին նիստից ի վեր՝ ՄԱԿ-ի բոլոր անդամ-պետությունները դիտարկվել են ՀՊԴ առաջին և երկրորդ նստաշրջանների ընթացքում երկու անգամ։ ՀՊԴ երրորդ նստաշրջանի ընթացքում ակնկալվում է, որ անդամ-պետությունները կներկայացնեն այն քայլերը, որ ձեռնարկել են նախորդ

դիտարկման ժամանակ առաջ քաշված առաջարկություններն իրականացնելու համար, և որոնց հարցում պետությունը պարտավորվել էր հետևողական լինել: Նիստի ժամանակ ներկայացվելու են նաև երկրում մարդու իրավունքների ոլորտի վերջին զարգացումները:

Հայաստանի պատվիրակությունը ղեկավարելու է Արտաքին գործերի փոխնախարար Արտակ Ապիտոնյանը:

Հայաստանի դիտարկման ղեկուցողներն են Նեպալի, Լեհաստանի և Վենեսուելայի (“troika” / եռյակ) ներկայացուցիչները:

Նստաշրջանի համացանցային հեռարձակումը հասանելի կլինի հետևյալ հղումով՝ <http://webtv.un.org>:

Հայաստանի դիտարկման ընթացքում ելույթ ունեցողների ցանկը և դիտարկման ժամանակ հնչելիք բոլոր հայտարարությունները կտեղադրվեն [ՀՊԴ արտաքին ցանցում](#).

Նախատեսվում է, որ ՀՊԴ աշխատանքային խումբը Հայաստանի վերաբերյալ առաջարկությունները կընդունի հունվարի 28-ին՝ ժամը 17:00-ին: Քննվող պետությունը կարող է ցանկություն հայտնել արտահայտել իր դիրքորոշումը դիտարկման ընթացքում ներկայացված առաջարկությունների վերաբերյալ:

Հավելյալ տեղեկությունների համար և լրատվամիջոցների հարցումների դեպքում խնդրում ենք դիմել Ռոլանդո Գոմեսին՝ +41 (0) 22 917 9711 / rgomez@ohchr.org կամ Սարա Լաբբերսենին՝ +41 (0) 22 917 9813 / slubbersen@ohchr.org:

Համընդհանուր պարբերական դիտարկման մասին ավելին իմանալու համար այցելեք www.ohchr.org/hrc/upr:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը հետևեք մեզ սոցիալական ցանցերում՝ [Facebook](#) [Twitter](#) [YouTube](#) [Instagram](#):